

ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԼԵԶՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայում հայերի մեջ ամբողջությամբ ձուլված հայ-բոշաները հիմնականում խոսում են հայերեն, որը և համարում են իրենց մայրենի լեզուն: Ներհամայնքային շփման ընթացքում նրանք որպես կանոն օգտագործում են Կարնո բարբառի խոսվածքները, իսկ ոչ-բոշայի հետ զրուցելիս օգտվում են հայերենի այն բարբառից կամ խոսակցական տարբերակից, որը տարածված է տվյալ վայրում⁷⁵³: Բացի այս, հայ-բոշաների շրջանում որոշ դեպքերում կիրառվում է նաև մի հետաքրքիր լեզու, որն առավել հայտնի է *բոշայերեն* անունով, իսկ տվյալ լեզվով այն կոչվում է *լոմավրեն* (*լոմ*, թեք ձևը *լոմավ*- «հայ-բոշա» և *-րեն* < հյ. -երեն՝ լեզու ցույց տվող վերջածանցով): Այս լեզվին համեմատաբար լավ տիրապետում է հայ-բոշաների ավագ սերունդը՝ հիմնականում 60-70 տարեկանից բարձր: Ավելի երիտասարդների մեծ մասը գիտի որոշ կցկտուր արտահայտություններ և բառեր միայն:

Գործառնական առումով այն գրեթե բացառապես ունի գաղտնալեզվի (тайный язык, секретный язык; secret language; Geheimsprache) կամ ծածկալեզվի (արգո) կարգավիճակ, այսինքն՝ խոսողները դիմում են այս լեզվին այն դեպքերում միայն, երբ անհրաժեշտ է, որպեսզի ոչ բոշան չհասկանա, թե ինչի մասին է խոսքը: Չնայած գործառնական նման սահմանափակությանը՝ այսուհանդերձ այս աղքատիկ լեզվով կարող են պատմվել զանազան անեկդոտներ և համառոտ պատմություններ, ինչպես նաև հորինվել հիմնականում կատակ բանաստեղծություններ⁷⁵⁴:

Կառուցվածքային տեսանկյունից լոմավրենը ներկայանում է որպես խառնալեզվի (смешанный язык, mixed language, intertwined language, Mischsprache) դասական օրինակ: Այն օգտվում է իր հիմքում հնդարիական ծագում ունեցող հիմնականում գնչուական բառապաշարից, որի մի զգալի մասը սերտ առնչություններ ունի Եվրոպայում ու Ասիայում տարածված գնչուական այլ լեզուների կամ բարբառների հետ, և արևմտահայերենի՝ մեծամասամբ, Կարնո բարբառի, քերականական ձևերից՝ կազմելով, փաստորեն, մի յուրօրինակ լեզվական խառնուրդ, որում հիմնական բառապաշարը ժառանգված է նախկին մայրենի լեզվից, իսկ քերականությունը և հնչյունական համակարգը փոխառված՝ մեկ ուրիշից⁷⁵⁵: Գնչուական բառապաշարի հիմքի վրա

⁷⁵³ Հայ-բոշաների հատկապես ավագ սերունդն ազատորեն կարող է խոսել ոչ միայն հայերենի մի քանի՝ հաճախ միմյանցից բոլորովին տարբեր, բարբառներով, այլ նաև թուրքերենով:

⁷⁵⁴ Սա ամենևին չի նշանակում, թե պետք է խոսել լոմավրենով ստեղծված, լայն իմաստով, բանահյուսության մասին:

⁷⁵⁵ Այս հանգամանքը հայ-բոշաների լեզուն խստորեն տարբերակում է հայերիս մեջ տարածված այլ ծածկալեզուներից, որոնցում խոսքի գաղտնիությունն ապահովվում է բառերն ամբողջությամբ կամ դրանց վանկերը շրջելու շնորհիվ (հմտ.՝ *թարսերեն դոպի* «փող»), յուրաքանչյուր վանկից առաջ կամ հետո տարբեր հնչյուններ կամ վանկեր ներմուծելով (հմտ.՝ *մնջերեն տրֆուն*, *հծծերեն զրտուն* «տուն») և այլն, Հայերի և իրանցիների շրջանում նման կարգի ծածկալեզուների խնդրին մի առանձին հոդվածով անդրադարձել են Գ. Մելիքյանը և Ա. Խրոմովը, տե՛ս Մելիքյան Գ., Խրոմով Ա., «Զարգարի» լեզուն իրանցիների մոտ. *Բանբեր Երևանի Համալսարանի (հասարակական գիտություններ)*, N 1(70), 1990, էջ 200-207, տե՛ս նաև Sutude M., Lahje-ye Seb-Seliyeri. *Farhang-e Īrān-zamīn* 10, 1962, ss. 471-477; Paul L., Die Geheimsprache von Kahak (Tafresch). *Orientalia Suecana* 48, 1999, ss. 105-114.; Bolūkbāši A., Zabānhā-ye ramzī dar Īrān. *Yādnāme-ye A. Tafazzoli*, Tehran, 2001, ss. 109-127; Melikian G. V., On the Problem of Secret Languages and Slangs in Iran. *Iran and the Caucasus* 6

առաջացած նման խառնալեզուներ, որոնք հաճախ կոչվում են նաև *մերձգնչուերեն* կամ *կեղծ գնչուերեն* (Para-Romani, Para-Gypsy), գործածվում են նաև աշխարհով մեկ սփռված գնչուական ծագում ունեցող, սակայն ծայր աստիճան ձուլված մի քանի այլ էթնիկական խմբերի շրջանում և հիմնականում ունեն գաղտնալեզվի գործառույթ: Սրանցից կարելի է հիշել *անգլոռոմանին* (անգլերենի քերականությամբ), *դորտիկան* (սոր հունարենի քերականությամբ), *կալոն* (իսպաներենի կամ կատալոներենի քերականությամբ), բասկյան և նորվեգական գնչուների լեզուները, Իրանի արևելյան շրջանների գնչուների լեզուն (պարսկերենի քերականությամբ)⁷⁵⁶ և այլն⁷⁵⁷: Այս կարգի խառնալեզուները

(1-2), 2002, pp. 189-198; Zākerī M., Ta’rif-e barxī estelāhāt-e mohemm va asāsī dar lahješenāsī. *Majmu’e maqālāt-e naxostīn hamandišī-ye gūyeššenāsī-ye Īrān*, Tehran, 2003, ss. 173-204.

⁷⁵⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Boretzky N., Sind Zigeunersprachen Kreols? In N. Boretzky, W. Enninger & Th. Stolz (eds.). *Akten des 1. Essener Kolloquium über Kreolsprachen und Sprachkontakt*, 43-70. Bochum: Brokmeyer, 1985. Boretzky N. & Iglā B., Romani Mixed Dialects. In Peter Bakker & Maarten Mous (eds.). *Mixed languages. 15 Case Studies in Language Intertwining*: 35-68. Amsterdam: IFOTT, 1994. Ivanow W., On the Language of the Gypsies of Qainat (Eastern Persia). *Journal and Proceedings of the Asiatic Society of Bengal* (N.S.), 1914, Vol. X, No. 11, pp. 439-455. Ivanow W., Further Notes on the Gypsies in Persia. *Journal and Proceedings of the Asiatic Society of Bengal* (N.S.), 1920, Vol. XVI, pp. 281-291.

⁷⁵⁷ Փնչուական ծագման բառաշերտեր են վկայված նաև թուրքական զանազան արժույթներում և գաղտնալեզուներում (Տե՛ս, Гордлевский В., Джарджары в Конье. *Избранные сочинения*, т. III, (История и культура), Москва, 1962, сс. 426-431; Caferoğlu A. Geygelli Yürüklerin Kullandıkları. *Anadolu Ağzlarından Toplamalar*, VII Bölüm, İstanbul, 1943, ss. 195-198; Kyuchukov H., Bakker P., A Note on Romani Words in the Gay Slang of İstanbul. *Grazer Linguistische Studien*, 51, 1999, pp. 95-98; Bläsing U., Ein Beitrag zu Zigeuner-Jargons, Geheimsprachen und zum argotischen Wortschatz in der Türkei: Einige Bemerkungen zu Gaferoğlus Liste aus dem Wortschatz der Elekçi bei Alaçam (Bolu). *Iran and the Caucasus* 6 (1-2), 2002, ss. 119-184.) միջինասիական (Տե՛ս, Оранский И., Новые сведения о секретных языках (арго) Средней Азии, I. Этнографическая группа “кавол” в Кулябе и ее арго. *Краткие сообщения Института народов Азии* XL, 1961, сс. 62-71; Оранский И., Новые сведения о секретных языках (арго) Средней Азии, II. Материалы для изучения арго этнографической группы “джуги” (Гиссарская долина). *Иранская филология (Труды научной конференции по иранской филологии)*, Ленинград, 1964, сс. 62-73; Оранский И., Новые сведения о секретных языках (арго) Средней Азии, III. Этнографическая группа “чистони”, ее диалект и арго. *Индийская и иранская филология (Вопросы диалектологии)*, Москва, 1971, сс. 66-99; Оранский И., Таджикоязычные этнографические группы Гиссарской долины (Средняя Азия). Москва, 1983; Троицкая А., Abdoltili – Арго цеха артистов и музыкантов Средней Азии. *Советское Востоковедение* V, Москва-Ленинград, 1948, сс. 251-274), իրանական (Gobineau von A., Die Wanderstämme Persiens. *Zeitschrift der Deutschen Mirgenlandischen Gesellschaft*, 11, 1857, ss. 689-699; Wirth A., A Persian Gypsy Vocabulary. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 6(2), 1927, pp. 88-95; Amanollahi S., Norbeck E., The Luti. An outcast Group of Iran. *Rice University Studies*, 2(61), 1975, pp. 1-12; Amanollahi S., Norbeck E., A Note on the Secret Language of the Traditional Musicians of Iran. *Journal of the Gypsy Lore Society* (4th S.), 1(4), 1978, pp. 283-286), աֆղանական գնչուանման ազգազրական խմբերի գաղտնալեզուներում (Տե՛ս Pstrusinska J., Magati: Some Notes on an Unknown Language of Northern Afghanistan. *Journal of the Anthropological Society of Oxford*, 2(17), 1986, pp. 135-139; Rao A., Marginality and Language Use: The Example of Peripatetics in Afghanistan. *Journal of the Gypsy Lore Society* (5th S.), 1, 1995, pp. 69-96.) և իրանական դերվիշների ժարգոններում (Տե՛ս, Ivanow 1922, 1927 Ivanow W., An Old Gypsy-Darwish Jargon. *Journal and Proceedings of the Asiatic Society of Bengal* (N.S.), Vol. XVIII, N 7, 1922, pp. 375-383; Ivanow W., Jargon of the Persian Mendicant Darwishes. *Journal and Proceedings of the Asiatic Society of Bengal* (N.S.), Vol. XXIII, N 1, 1927, pp. 243-245; Ромаскевич А., К вопросу о жаргонах иранских дервишей. *Иранские языки* I, Москва-Ленинград, 1945, сс. 141-144): Այսուհանդերձ, հիշյալ ծածկալեզուները պետք է տարբերակել մերձգնչուական խառնալեզուներից, չնայած առանձին դեպքերում լեզվի այս երկու ձևերի հստակ սահմանազատումն անհնար է: Փնչուերեն որոշ բառեր վկայված են նաև Սվեդիայի և Մալաթիայի հայերեն բարբառների ժարգոնային ոճում (Տե՛ս Dowsett C.J.F., Some Gypsy-Armenian

համաժամանակյա վերլուծության տեսանկյունից դժվար է դասել լեզուների այս կան այն ընտանիքին կամ խմբին: Տարածամանակյա կտրվածքով, եթե համեմատության համար հիմք ընդունենք հիմնական բառամթերքը և բնիկ քերականական ձևերի աղքատիկ մնացուկները, ապա լումավրենը պետք է տեղադրել հնդեվրոպական լեզվաընտանիքի նոր հնդարիական լեզուների գնչուական խմբում: Վերջինիս մեջ լումավրենը, ի նկատի առնելով բառային և հնչյունական զուգաբանությունները, զբաղեցնում է միջանկյալ դիրք մի կողմից՝ մերձավորարևելյան գնչուական բարբառախմբի, իսկ մյուս կողմից՝ եվրոպական գնչուների լեզուների միջև: Այսպիսով, փաստորեն, այն կարելի է համարել կենտրոնական գնչուական բարբառ:

Հայ-բոշաների գաղտնալեզվի առաջին նմուշները՝ 89 բառ, գրի առնված Կարինի շրջանի հայ-բոշաներից և թարգմանված գրաբարի, մեզ է տրամադրում Մխիթարյան ուխտի անդամ Ներսես Սարգիսեանը «Տեղագրութիւնք ՚ի Փոքր եւ ՚ի Մեծ Հայս» ստվարածավալ աշխատության մեջ⁷⁵⁸: Դեռևս այս առաջին վկայության մեջ հեղինակը, խոսելով բոշայերենի գործառնության և բնույթի մասին, նկատում է, «*զոր վարեն միշտ երբ զգաղտնի ինչ իրացն զրուցել կամիցին. նմին իրի յոյժ աղքատ է լեզուն այն եւ հայերէնի խառն*», և իր բառացանկից վեց բառ, համեմատելով լատիներեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն և սանսկրիտյան համապատասխան ձևերի հետ, նշում է, որ այս լեզվի որոշ բառեր նմանություններ ունեն «հնդկագերման» (իմա՝ հնդեվրոպական) լեզուների հետ (անդ.): Բոշայերենին նվիրած ընդամենը մեկ էջում հայր Ն. Սարգիսեանը, լինելով առաջինը, դիպուկ կերպով նկատում է վերջինիս թե՛ գաղտնալեզու, թե՛ խառնալեզու, և թե՛ հնդեվրոպական լեզու հանդիսանալու հանգամանքները: Սարգիսեանի գրքի հայ-բոշաներին նվիրված հատվածը գերմաներեն թարգմանությամբ գնչուական բարբառների հետազոտությանը նվիրված իր լայնածավալ աշխատության մեջ է ընդգրկել Ֆ. Միկլոշիչը⁷⁵⁹:

1870թ. լույս է տեսնում Օսմանյան կայսրության գնչուներին նվիրված Ալեքսանդր Պասպատիի նշանավոր «Études sur les Tchingianés ou Bohémiens de l'Empire Ottoman» գիրքը, որտեղ հեղինակը գնչուերեն-ֆրանսերեն բառարանում և ֆրանսերեն-գնչուերեն ցանկում (էջ 126-652) *Tchingiané Tokat* նշումով ներկայացնում է Եվրոկիայի (Թոխաթ) հայ-բոշաներից գրի առած 8 բառ, որոնցից մեկը վկայված չէ ոչ մի այլ աղբյուրում⁷⁶⁰:

Լումավրենի ուսումնասիրության մի նոր մակարդակ է ներկայացնում 1887թ. հրապարակ իջած Կ. Պատկանովի (Քերովբե Պատկանյան) «Цыгань. Нескoлькo словъ o наречіяхъ закавказскихъ цыгань: Боша и Карачи», որի անգլերեն թարգմանությունը 1907-1908թթ. հատվածաբար տպագրվել է «Journal of the Gypsy Lore Society» գնչուագիտական հեղինակավոր հանդեսում⁷⁶¹: Հիմնվելով Ն. Սարգիսեանի և Ա. Պասպատիի վերոհիշյալ նյութերի, Ելիզավետպոլ քաղաքի դպրոցներից մեկի ուսուցիչ Իոակիմովի Ծալկայի շրջանի հայ-բոշաներից գրի առած 100 բառ և 13 նախադասություն պարունակող ցանկերի, ինչպես նաև Կ. Խալաթյանցի և Ա. Ամիրյանի Ալեքսանդրապոլի (Գյումրի) հայ-

Correspondences. *Revue des Études Arméniennes* (N.S.), Tome X, 1973-1974, pp. 59-81): Ոչ ստանդարտ խոսքում գնչուական բառաշերտի մասին մանրամասն տե՛ս Matras Y., (ed.) *The Romani Element in Non-standard Speech*. Wiesbaden, 1998:

⁷⁵⁸ Սարգիսեան Ն., Ինքնուրոյն Բանք զԲոշայից Կարնոյ. *Տեղագրութիւնք ՚ի Փոքր եւ ՚ի Մեծի Հայս*, էջ 81-82: Վենետիկ, 1864, էջ 82:

⁷⁵⁹ Miklosich F., Beiträge zur Kenntnis der Zigeunermundarten, Bd. IV. Proben von Zigeunermundarten, Wien, 1881, ss. 281-283.

⁷⁶⁰ Paspatis A. G., Études sur les Tchingianés ou Bohémiens de l'Empire Ottoman. Constantinople: Imprimerie Atoine Koroméla 1870, (reprinted: Osnabrück, 1973) p. 221.

⁷⁶¹ Stéu Patkanoff K. P., Some Words on the Dialects of the Transcaucasian Gypsies: Boša and Karači. *Journal of the Gypsy Lore Society* (N.S.), 1907-1908, 1, pp. 229-257; 2, pp. 246-266, 325-334.

բոշաներից հավաքած 150 բառից և 35 համառոտ նախադասությունից բաղկացած մի ցուցակի վրա, Կ. Պատկանովը լուսավրենի բառապաշարը համեմատում է եվրոպական, և ասիական գնչուների լեզուների հետ և եզրակացնում, որ հայ-բոշաների լեզուն գնչուական իսկական մի բարբառ է, որի բառերի մի մասը ընդհանուր է եվրոպական գնչուների լեզվի հետ, իսկ մյուս մասը՝ բնորոշ միայն այս լեզվին:

1892-1997թթ. «Մուրճ» հանդեսում հայ-բոշաներին նվիրված հոդվածներով սկսում է հանդես գալ Գրիգոր Վանցեանը⁷⁶²: Դրանցում նա անդրադառնում է նաև հայ-բոշաների գաղտնալեզվին՝ ներկայացնելով, մասնավորապես, բոշայերեն երեք կարճ երգեր՝ զուգահեռ հայերեն թարգմանությամբ⁷⁶³: Վանցեանը նկատում է, որ *«Եթէ որ և է գաղտնիք քան է ուզում խօսել բոշան իւր ընկերոջ հետ, նա գործ է ածում բոշայերէն լեզու, որ նոցա հին, մայրենի լեզուի մնացորդն է»*⁷⁶⁴ և առաջ քաշում այն ուշագրավ տեսակետը, թե *«բոշաների կեանքը Հայաստանում լուսաբանելու համար մեծ նշանակութիւն կարող է ունենալ ոչ միայն բոշայերէնը, այլ և այն հայերէնը, որ գործածական է հիմակւայ բոշաների մէջ»*⁷⁶⁵: Հիշյալ հեղինակի գրչին է պատկանել նաև հայ-բոշաների վերաբերյալ մի համապարփակ աշխատություն, որտեղ ընդգրկված էին նաև լուսավրեն բառացանկ, բանաստեղծություններ և մի ընդարձակ հեքիաթ: Յավոք, հիշյալ աշխատությունը այդպես էլ լույս չընծայվեց, իսկ դրա գտնվելու վայրն այժմ անհայտ է: Մնում է միայն մխիթարվել այն փաստով, որ գոնե այս ձեռագրի բոշայերեն նյութը, հավանաբար ամբողջությամբ, մեզ է հասել Ֆ. Ֆինքի գրքի միջոցով (տե՛ս ստորև):

Նույն տարիներին «Հնութիւնք Ակնայ» գրքում Ակն քաղաքի հայ-բոշաների գաղտնալեզվից 68 բառ և համառոտ արտահայտություններ է ներկայացնում Յովհաննես Ճանիկեանը⁷⁶⁶: Հեղինակը, անդրադառնալով իր գրառած լեզվի բառապաշարին, քերականությանը և արտասանական առանձնահատկություններին՝ նշում է, թե *«վերոյ գրեալ բառերու մէջ կան որ հայերէնի աղաւաղեալն է. կան որ պարսկերէն կամ արաբերէն»*⁷⁶⁷ են կամ այլ լեզուաց կը վերաբերին: *Եւ ինչպէս յայտ է, թէ և անուանց հոլովումն ու բայից խոնարհումն հայերէն են, բայց արտասանութիւնն՝ տարբեր ՚ի հայերէնէ՝ ատամանց միջէն և ռնգային էր»*⁷⁶⁸: Ճանիկեանը, մատնանշելով, որ հայ-բոշաները, կամ հրաժարվում, և կամ մեծ դժկամությամբ են տեղեկություններ տրամադրում իրենց լեզվի մասին, ենթադրում է, որ *«յիշեալ սակաւաթիւ բառերն Արկոտեան լեզուի (իմա՝ արգո) պէս այլոց անհասկանալի լինելու համար հնարուած են, և կամ բոշայից լեզու մի կայ թերի և աղաւաղեալ և բոշայք չեն ուզեր յայտնել»*:

1896թ. «Ազգագրական Հանդեսում» զետեղված Ջավախքին նվիրված իր ակնարկում, համառոտ անդրադառնալով հայ-բոշաներին, հայերեն թարգմանությամբ

⁷⁶² Տե՛ս Վանցեան Գ., Հայ բոշաներ, *Մուրճ*, 1892, N 7-8, էջ 1047-1064, N 9, էջ 1310-1321; Վանցեան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցեալից, *Մուրճ*, 1894, N 7-8, էջ 1066-1088; Վանցեան Գ., Հայեր բոշաներից, *Մուրճ*, 1897, N 10, էջ 1394-1403:

⁷⁶³ Վանցեան Գ., Հայ բոշաներ, *Մուրճ*, 1892, N 9, էջ 1320-21, Վանցեան Գ., Հայեր բոշաներից, *Մուրճ*, 1897, N 10, էջ 1402:

⁷⁶⁴ Վանցեան Գ., Հայ բոշաներ, *Մուրճ*, 1892, N 9, էջ 1320:

⁷⁶⁵ Վանցեան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցեալից, *Մուրճ*, 1894, N 7-8, էջ 1086:

⁷⁶⁶ Ճանիկեան Յ., Հայ բոշայք կամ մաղագործք, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, 1895, էջ 61-63: Ճանիկեանի գրառած բոշայերեն բառերն ու արտահայտությունները նույնությամբ մեջբերված են նաև Ա. Քէչեանի «Ակն և Ակնցին» գրքի առաջին հրատարակության մեջ (1943, էջ 54-55):

⁷⁶⁷ Պետք է նշել, որ Յ. Ճանիկեանի բառացանկում հաստատապես արաբական ծագում ունեցող որևէ լուսավրեն բառ վկայված չէ:

⁷⁶⁸ Ճանիկեան Յ., Հայ բոշայք կամ մաղագործք, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, 1895, էջ 63-64:

բոշայերեն երկու երգի բառեր է ներկայացնում Երևանդ Լալայեանը⁷⁶⁹: Ըստ երևույթին, այս երգերը հորինված միևնույն բոշա աշուղի կողմից ներկայանում են որպես Գ. Վանցեանի⁷⁷⁰ գրառած երգերի մի փոքր ձևափոխված տարբերակներ: Լալայեանը նշում է նաև, որ ինքն ունի արդեն պատրաստ «հայերենից բոշերեն» բառարան⁷⁷¹, որի հետագա ճակատագիրը մեզ այդպես էլ անհայտ է մնում: 1898թ. «Ազգագրական Հանդեսի» երկու հատորներում Վրթանես Փափագեանցը հրատարակում է հայ-բոշաներին նվիրված իր ազգագրական նշանավոր ուսումնասիրությունը, որը մեկ տարի անց լույս է տեսնում առանձին գրքով⁷⁷²: Այս աշխատության «Լեզու» բաժնում⁷⁷³ հեղինակը, հետևելով Բ. Պատկանեանին, բոշայերենը դիտարկում է որպես գնչուկան մի բարբառ, որը մեծապես ազդված է պարսկերենից և հայերենից⁷⁷⁴: «Բանավոր գրականություն» հատվածում⁷⁷⁵ Փափագեանցը ամբողջությամբ մեջբերում է Ե. Լալայեանի և Գ. Վանցեանի հրատարակած վերոհիշյալ համառոտ երգերը՝ դրանցում կատարելով որոշ ճշգրտումներ: Լեզվի ուսումնասիրությամբ զբաղվողի տեսանկյունից սակայն այս երկի ամենաարժեքավոր մասը հավելվածի տեսքով ներկայացվող «Հայ-բոշաների լեզվի բառարանն» է, որին կից ներկայացված են թվականներ, մի քանի բառի հոլովման և խոնարհման աղյուսակներ, ինչպես նաև մի համառոտ պատմվածք և Պուշկինի «Ոսկե Ձկնիկի» մի հատվածի թարգմանությունը բոշայերեն⁷⁷⁶: Մոտ 400 լուսավրեն բառ ընդգրկող իր բառարանը Փափագեանցը կազմել է օգտվելով իրենից առաջ հրատարակված նյութերից, Ա. Մխիթարեանի տրամադրած բառացուցակից և սեփական գրառումներից: Չնայած բառացանկում տեղ գտած որոշ անճշտությունների, այն կարևոր նյութ է պարունակում հայ-բոշաների գաղտնալեզվի վերաբերյալ: Նույն տարում Վ. Փափագեանցի այս աշխատանքը մանրակրկիտ քննադատության է արժանանում «Մուրճ» հանդեսում տպված մի գրախոսականում⁷⁷⁷: Գրախոս Գ. Վանցեանը, կատարելով մի շարք իրավացի նկատողություններ և ճշտումներ, մատնանշում է նաև գրքի առավելությունները և արժեքավոր կողմերը: 1901թ. Փափագեանցի հիշյալ աշխատության ռուսերեն

⁷⁶⁹ Լալայեան Ե., Ջալախք, Հայ բոշաներ, *Ազգագրական Հանդես*, գիրք Ա, 1896, էջ 181, վերահրատարակված Լալայան Ե., Ջալախք, Հայ բոշաներ, *Երկեր*, հտ. 1, Երևան, 1983, էջ 87:

⁷⁷⁰ Վանցեան Գ., Հայ բոշաներ, *Մուրճ*, 1892, N 7-8, էջ 1047-1064, N 9, էջ 1310-1321:

⁷⁷¹ Լալայեան Ե., Ջալախք, Հայ բոշաներ, *Ազգագրական Հանդես*, գիրք Ա, 1896, էջ 184-185, վերահրատարակված Լալայան Ե., Ջալախք, Հայ բոշաներ, *Երկեր*, հտ. 1, Երևան, 1983, էջ 92-93:

⁷⁷² Փափագեան Վ., Հայ-բոշաներ, *Ազգագրական Հանդես*, 1898, գիրք Գ, էջ 74-90; գիրք Դ, 203-275; Փափագեանց Վ., Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն), Արտատպած Ազգագրական Հանդեսից, Թիֆլիս, 1899: Մոտ մեկ դար անց այս աշխատության որոշ հատվածներ Գ. Ասատրյանի առաջաբանով և ծանոթագրություններով տպագրվում են «Իրան-նամե» արևելագիտական հանդեսի երեք համարներում (տե՛ս 1995, NN 3, 4, 5): Աշխատության գերմաներեն թարգմանությունը, առանց բառարանի և հավելվածների, մի շարք այլ կրճատումներով հանդերձ տպագրվել է «Pogrom» հանդեսում:

⁷⁷³ Փափագեանց Վ., Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն), Արտատպած Ազգագրական Հանդեսից, Թիֆլիս, 1899, էջ 56-61:

⁷⁷⁴ Պարսկերենի ազդեցությունը ապացուցելու համար Փափագեանցի մեջբերած լուսավրեն բառերի մի զգալի մասը (տե՛ս էջ 57) բնիկ հնդարիական ծագում ունեն:

⁷⁷⁵ Փափագեանց Վ., Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն), Արտատպած Ազգագրական Հանդեսից, Թիֆլիս, 1899, էջ 73-76:

⁷⁷⁶ Փափագեանց Վ., Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն), Արտատպած Ազգագրական Հանդեսից, Թիֆլիս, 1899, էջ 85-99: Պետք է նշել, որ բոշայերեն առանձին բառեր և արտահայտություններ են ներմուծվել նաև Վ. Փափագեանի հայ-բոշաներին նվիրված գեղարվեստական գործերում (տե՛ս, օր.՝ «Խաթ-Սաբա», «Մանթո» և այլ պատմվածքներ):

⁷⁷⁷ Վանցեան Գ., Գրախոսություն՝ *Փափագեանց, Վ. 1899. «Հայ-բոշաներ» Ազգագրական ուսումնասիրություն*, Թիֆլիս, Մուրճ, 1899, N 9, էջ 1079-1081:

ամբողջական թարգմանությունը, արդեն արժանացած Մոսկվայի Կայսերական Ազգագրական Ընկերության բարձր գնահատանքին, հրատարակվում է “Этнографическое Обозрение” ազգագրական պարբերականում⁷⁷⁸: Մեկ տարի անց Մխիթարյանների «Բազմավեպում» Վ. Փափագեանը տպագրում է մի համառոտ ակնարկ, որտեղ, չավելացնելով որևէ նոր բան, հակիրճ անդրադառնում է նաև հայ-բոշաների լեզվին⁷⁷⁹:

1906թ. լույս է տեսնում գերմանացի գիտնական-գնչուագետ Ֆ. Ֆինքի “Die Stellung des Armenicsh-Zigeunerischen im Kreise der verwandten Mundarten” («Հայ-գնչուերենի դիրքը ազգակից բարբառների շրջապատում») ծավալուն հոդվածը, որում հեղինակը փորձ է կատարում որոշել բոշայերենի ծագումը և տեղը հնդարիական լեզուների և գնչուական բարբառների համակարգում: Դիտարկելով լոմավրենի հնչյունական համակարգը և բառապաշարը պատմահամեմատական լեզվաբանության կտրվածքով, և, փաստորեն, առաջին անգամ ստուգաբանելով մոտ 100 հնդարիական ծագում ունեցող բոշայերեն բառ, հեղինակը հանգում է այն կարծիքին (որին չի դավաճանում նաև իր հետագա երկու գործերում), թե հնդարիական լեզուների շարքում հայ-բոշաների լեզուն ունի եվրոպական գնչուների բարբառներից տարբեր ծագում. հայ-բոշաների լեզուն սերում է բուն հնդարիական պրակրիտներից՝ ամենայն հավանականությամբ *շաուրասենիից* (Śaurasenī) կամ պրակրիտները շարունակող ուշ միջին հնդարիական լեզուներից (Apabhraṃśa), մինչդեռ արևմտյան գնչուերենը հանգում է ներկայիս դարդյան լեզուների նախնին համարվող *պայշաչի* (Paisācī) պրակրիտին, կամ, օգտագործելով այսօրվա եզրաբանությունը, բոշայերենն ունի հյուսիսարևմտյան հնդարիական, իսկ արևմտյան գնչուների լեզուն՝ դարդյան ծագում⁷⁸⁰: Պետք է նշել, որ Finck-ի նման եզրահանգումը հենվում է բավական թույլ հիմնավորման՝ միայն մի քանի բառերի վերլուծության վրա, և բացի այս՝ դեռևս հրապարակ չէր իջել Ա. Մաքալիստերի⁷⁸¹ պաղեստինյան գնչուների լեզվին նվիրված հիմնարար աշխատությունը, որն ավելի ընդարձակ նյութ էր տալու գնչուական բարբառների կամ լեզուների դասակարգման համար: 1907թ. “Mémoires de l’académie impériale des sciences de St.-Petersbourg” շարքում լույս է տեսնում նույն հեղինակի “Die Sprache der Armenischen Zigeuner” («Հայկական գնչուների լեզուն») մենագրությունը⁷⁸²: Սա, փաստորեն, հայ-բոշաների լեզվի համակողմանի նկարագրության առաջին լուրջ գիտական փորձն է: Եզակի թերություններից կարելի է նշել այն հանգամանքը, որ հեղինակը սեփական նյութեր չի ունեցել այլ օգտվել է վերոհիշյալ հայ հեղինակների հրապարակած բառացանկերից, ինչպես նաև Վանցեանի և

⁷⁷⁸ Папазианъ В., Армянскіе боша (цыганы). Этнографическій очеркъ. *Этнографическое Обозрение* 2:, 1901, сс. 93-158.

⁷⁷⁹ Փափագեան Վ., Հայ-բոշաներ և նրանց ուսումնասիրութեան գործը, *Բազմավեպ*, 1902, թիւ 47, էջ 163-170:

⁷⁸⁰ Հարկ է նշել, որ Paisācī կամ Pisāca պրակրիտը, որի անվանումը հատկապես 19-րդ դարավերջին գուտ ենթադրաբար կիրառություն էր ստացել որպես դարդյան լեզուների ընդհանուր նշանակյալ, համաձայն այն վարկածի, որ այդ պրակրիտը կարող էր խոսվել ներկայիս դարդյան լեզուների տարածման արեալում, որևէ կերպ չի կարող համարվել դարդյան լեզուների նախնի: Պայշաչին տարբեր հետազոտողների կողմից տեղադրվել է Հնդկական թերակղզու գրեթե բոլոր կողմերում և ըստ ամենայնի այս անվան տակ գրանցվել է ոչ հնդարիացիների (դրավիդներ, իրանցիներ) հնդարիական խոսքը: Śaurasenī պրակրիտը իր անվան համար պարտական է Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող Շաուրասեն մարզին: Այն հանդիսացել է հնդկական դասական դրամայի հիմնական լեզուն (idem):

⁷⁸¹ Macalister R. A. S., The Language of the Nawar or Zutt, the Nomad Smiths of Palestine. *Gypsy Lore Society Monographs*, No. 3. London, 1914.

⁷⁸² Finck F. N., Die Sprache der Armenischen Zigeuner. *Mémoires de l’académie impériale des sciences de St.-Petersbourg VIII série*, Vol. VIII, No. 5. St.-Petersbourg, 1907.

գերմանացի գիտնական Լեհման-Չաուփթի տրամադրած ձեռագիր նյութերից, ի հետևանք որի աշխատանք են սպրդել մի շարք սխալներ և վրիպակներ: Պետք է նշել նաև, որ, շարունակելով իր նախորդ հոդվածում սկսած աշխատանքը, գերմանացի գնչուագետը այս գրքում հնդարիական ստուգաբանությունների թիվը հասցնում է 120 բառի: Փաստորեն, առաջին անգամ ստուգաբանվում են նաև բոշայերենի իրանական և հայկական ծագման որոշ բառեր, չնայած ստուգաբանություններից մի քանիսը չի կարելի ճիշտ համարել: Միննույն տարում “Journal of the Gypsy Lore Society” հեղինակավոր գնչուագիտական հանդեսում տպագրվում է Finck-ի “Die Grundzüge des Armenisch-Zigeunerischen Sprachbaus” («Հայ-գնչուերենի լեզվական կառուցվածքի հիմնական գծերը») հոդվածը, որտեղ հեղինակը, հենվելով իր վերոհիշյալ աշխատության և հոդվածի վրա, չկատարելով որևէ հավելումներ կամ ճշգրտումներ ամփոփ ներկայացնում է լրմավրենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական ուրվագծերը⁷⁸³: Նույն հանդեսում 1908թ. լույս է տեսնում Ե. Քուհնի գրախոսականը, որում համաձայնվելով Ֆինքի հիշյալ երեք գործերում արտահայտված հիմնական տեսակետների հետ, հեղինակը կատարում է մի քանի ճշտումներ և լրացումներ⁷⁸⁴:

1923թ. բոշայերենի առկա բառանյութն ընդգրկվում է Ջ. Սամփսոնի “On the Origin and Early Migrations of the Gypsies” («Գնչուների ծագման և վաղ տեղաշարժերի շուրջ»): Sampson-ն իր այս հոդվածում, ինչպես նաև մի քանի տարի անց հրատարակած Ուելսի գնչուների լեզվին նվիրված մենագրության մեջ⁷⁸⁵, զարգացնում է այն տեսակետը, որ գնչուական լեզվական միատարր զանգվածը տրոհվել է Իրանի տարածքում միայն, և, որ գնչուերենը, լինելով հյուսիս-արևմտյան հնդարիական լեզու, ուղղակիորեն չի հանգում մեզ հայտնի հինգ պրակրիտներից որևէ մեկին⁷⁸⁶: Ըստ հին հնդարիական **gh**, **dh**, **bh** և **jh** ձայնեղ շնչեղ բաղաձայների գնչուական լեզուներում հետագա արտացոլման, նա վերջիններս բաժանում է երկու բարբառախմբի, դրանք պայմանականորեն անվանելով **ben** և **phen** խմբեր, ի նկատի ունենալով հին հնդարիական **bhagini-** «քույր» բառում շնչեղ բաղաձայնի հետագա հնչյունական զարգացումը՝ եվրոպական գնչուների լեզվում **phen**, հայկական գնչուների լեզվում **p'en** և մերձավորարևելյան գնչուների բարբառներում **ben** տարբերակներով:

1926թ. հայ-բոշաների գաղտնալեզվի բառամթերքը իր մեծածավալ “The Position of Romani in Indo-Aryan” («Գնչուերենի դիրքը հնդարիական լեզուներում») հոդվածում լայնորեն կիրառում է R. Turner-ը⁷⁸⁷: Նշանավոր հնդարիագետը, ստուգաբանում է մի քանի հնդարիական ծագման բոշայերեն բառեր և, կարծիք հայտնելով, որ գնչուական ողջ լեզվական զանգվածի երեք հիմնական բարբառները, որոնք նա կոչում է, համապատասխանաբար, **rom**, **lom** և **dom**, արդեն Հնդկական թերակղզում առանձնացել էին միմյանցից, տարածմանակյա վերլուծությամբ, հնչյունական և բառային նոր

⁷⁸³ Տե՛ս Finck F. N., Die Grundzüge des Armenisch-Zigeunerischen Sprachbaus. *Journal of the Gypsy Lore Society* (N.S.), 1907a, 1, ss. 34-60.

⁷⁸⁴ Տե՛ս, Kuhn E., Review of Finck, F. N. 1907. Die Sprache der Armenischen Zigeuner. *Mémoires de l'académie impériale des sciences de St.-Petersbourg VIII série*, Vol. VIII, No. 5. St.-Petersbourg. *Journal of the Gypsy Lore Society* (N.S.), 1908, 2, pp. 67-74.

⁷⁸⁵ Sampson J., The Dialect of the Gypsies of Wales. London, 1926.

⁷⁸⁶ Sampson J., On the Origin and Early Migrations of the Gypsies. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 1923, 2(4), pp. 162-194. Sampson J., The Dialect of the Gypsies of Wales. London, 1926.

⁷⁸⁷ Turner R., The Position of Romani in Indo-Aryan. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 1926, 5(4), pp. 145-189. Հայ-բոշաների գաղտնալեզվի բառանյութը ընդգրկված է նաև այս հեղինակի “A Comparative Dictionary of the Indo-Aryan Languages” խոշորածավալ բառարանում:

գուգաբանությունների միջոցով առաջարկում է գնչուերենը համարել կենտրոնական հնդարիական լեզու⁷⁸⁸:

1928թ. Լեհման-Հաուփթը “Journal of the Gypsy Lore Society” հադեսում հրատարակում է “Beiträge zur Kenntnis der Bôscha” («Ավանդներ բոշայագիտության մեջ») հոդվածը, որում հեղինակն անդրադառնում է Ֆինքի գրքում ընդգրկված իր կողմից էրզրումում և շրջակա գյուղերում գրի առած բոշայերեն բառերին և նախադասություններին՝ նոր լույսի ներքո կրկին ներկայացնելով դրանց մի մասը: Նա նաև առաջարկում է հայ-բոշաների լեզվի հանդեպ կիրառել “Mundart der nordwestarmenischen Zigeuner” «հյուսիս-արևմտյան հայկական գնչուների բարբառ» եզրը, քանի որ Հայաստանի (իմա՝ Մեծ Հայքի) տարածքում, մասնավորապես Վանում խոսվում էին գնչուական այլ բարբառներ ևս, որոնցից Վանի գնչուների լեզուն արտացոլող Լեհման-Հաուփթի գրի առած և Ֆինքին տրամադրած նյութերը, այդպես էլ լույս չտեսնելով, կորստի էին մատնվել⁷⁸⁹:

1973-74թթ. “Revue des Études Arméniennes” նշանավոր հայագիտական հանդեսում “Some Gypsy-Armenian Correspondences” («Գնչու-հայկական որոշ աղերսներ») հոդվածով հանդես է գալիս Դովսեթը: Հեղինակը հիմնականում անդրադառնում է հայերենի և եվրոպական գնչուների լեզուների միջև փոխազդեցություններին, սակայն ստուգաբանություններ է առաջարկում նաև երեք բոշայերեն բառերի համար⁷⁹⁰:

Սուտ կեսդարյա դադարից հետո 1976թ. իր “Островной диалект армянских цыган - Боша” հոդվածով հետազոտողների ուշադրությունը կրկին հայ-բոշաների լեզվի վրա է հրավիրում Տ. Վենսցելը: Հոդվածը ծանրաբեռնված է խնդրին պակաս առնչվող տեսական մասով, և միայն վերջին երկու էջերում է անդրադարձ կատարվում հայ-բոշաների գաղտնալեզվին ու վերջինիս առնչակցությանը մի կողմից՝ արևմտյան գնչուների լեզվի, իսկ մյուս կողմից՝ հինդիի հետ⁷⁹¹: Հեղինակը ներկայացնում է արդեն հայտնի մի քանի ներգնչուական հնչյունական և բառային գուգաբանություններ: Վերջիններիս մեջ խիստ կասկած է հարուցում որպես բոշայերեն ներկայացված **putərav** < սկ. **putra-** «որդի» (с. 127) բառը: Նախ՝ այն վկայված չէ որևէ աղբյուրում, իսկ Վենսցելը սեփական նյութեր գրի չի առել, և բացի այս, եթե նույնիսկ հնդարիական այս բառը գոյություն ունենար հայ-բոշաների լեզվում, ապա այն պետք է ունենար ***pu(r)rav** ձևը՝ համաձայն բոշայերենում առկա և առաջին անգամ դեռևս Ֆինքի⁷⁹² կողմից մատնանշված սկ. **-tr-** > լում. **-rr-** / **-r-** հնչյունական անցման օրենքի: 1978թ. “Études Tsiganes” գնչուագիտական պարբերականում

⁷⁸⁸ Տե՛ս Turner R., The Position of Romani in Indo-Aryan. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 1926, 5(4), pp. 145-189.

⁷⁸⁹ Տե՛ս Lehman-Haupt C. F., Beiträge zur Kenntnis der Bôscha. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 1928, 7, ss. 184-195. Վանի գնչուներին պետք է խստիվ տարբերակել հայ-բոշաներից: Առաջինները իրենց կոչում են **dom** (այժմ Վանում ապրող քրդերը սրանց անվանում են **mirtib**), մահմեդական են և խոսում են բոշայերենից տարբեր՝ մերձավորարևելյան գնչուների բարբառներին մոտ կանգնած լեզվով: Ցավոք, գնչուների այս խմբից տարբեր ժամանակներում գրի առնված և հրատարակված նյութերն ընդամենը մի քանի տասնյակի հասնող բառեր են միայն, որոնք, այնուամենայնիվ, բավարար են, որպեսզի այս բարբառը նույնացվի, այսպես կոչված, *դարպի* գնչուների լեզվի հետ: Հավանաբար, հենց այս պատճառով էլ Finck-ը Վանի գնչուների լեզվին առնչվող նյութը դուրս է թողել իր աշխատանքից:

⁷⁹⁰ Տե՛ս Dowsett C.J.F., Some Gypsy-Armenian Correspondences. *Revue des Études Arméniennes* (N.S.), 1973-1974, Tome X, pp. 59-81.

⁷⁹¹ Տե՛ս Вентцель Т. В., “Островной” диалект армянских цыган – Боша. *Лингвистическая география, диалектология и история языка*, Ереван, 1976. сс. 119-127.

⁷⁹² Finck F. N., Die Stellung des Armenicsh-Zigeunerischen im Kreise der verwandten Mundarten. *Rudolf Haupt. Buchhandlung und Antiquariat. Katalog 9. Indien und Iran*. Halle, 1906, s. 8.

Վենսցելի հոդվածը գրախոսում է Լ. Մանուշը: Գրախոսականի հեղինակը, չունենալով որևէ դիտողություն կամ հավելում, բավարարվում է միայն հոդվածի ներկայացմամբ⁷⁹³:

1985թ. “Sind Zigeunersprachen Kreols?” («Կրեոլյան են արդյոք գնչուական լեզուները») հոդվածում մերձ-գնչուական լեզուներին (Para-Romani)՝ այդ թվում նաև լոմավրենին է անդրադառնում Ն. Բորեթցկին: Հեղինակը, հենվելով Ֆինքի աշխատության վրա, համառոտ ուրվագծերով ներկայացնում է հայ-բոշաների լեզուն⁷⁹⁴: Գրեթե նույնությամբ լոմավրենը ներկայացվում է նաև այս հեղինակի և Բ. Իգլայի “Romani Mixed Dialects” («Ռոմանիի (իմա՝ գնչուերենի) խառնաբարբառները») հոդվածում⁷⁹⁵:

Բոշայերեն մուտք գործած հայերեն փոխառությունների խնդիրը, ինչպես նաև հայերենի ազդեցությունը լոմավրենի հնչյունական համակարգի վրա, քննարկվում են Ն. Բորեթցկիի մեկ ուրիշ՝ “Armenisches im Zigeunerischen: Romani und Lomavren” («Հայկական տարրերը գնչուերենում. ռոմանի և լոմավրեն») հոդվածում⁷⁹⁶:

1991թ. “Études Tsiganes” ֆրանսալեզու գնչուագիտական հանդեսում լույս է տեսնում R. Benninghaus-ի “Les Tsiganes de la Turquie Orientale” («Արևելյան Թուրքիայի գնչուները») ուշագրավ հոդվածը, որի “Les Dialects Poşa et Mitrip” («Բոշաների և մըթրըբների բարբառները») հավելվածում, բերվում են մոտ 80 բառ (pp. 58-59) գրի՝ առնված այժմյան Թուրքիայում բնակվող հայ-բոշաների գաղտնալեզվից գերմաներեն և ֆրանսերեն թարգմանությամբ և զուգահեռաբար բերված համշենահայ բարբառից և թուրքերենից փոխառյալ բառերի ցանկով⁷⁹⁷:

1992թ. առաջին անգամ և 1995թ. երկրորդ հրատարակությամբ լույս է տեսնում գնչուական երեք լեզուներում իրանական փոխառությունների հարցին նվիրված “On the Migration and Affiliation of Dōmba: Iranian words in Rom, Dom and Lom Gypsy” («Պրոտոգնչուների միասնականության և գաղթի հարցի շուրջ. Իրանական բառերը *ռոմ*, *դոմ* և *լոմ* գնչուերենում») հոդվածը, որում Ի. Հանքոքը անդրադառնում է լոմավրենի իրանական փոխառություններին: Նա փորձ է կատարում գնչուների երեք ճյուղերի լեզուների փոխառյալ իրանական բառերի հիման վրա լույս սփռել վերջիններիս փոխառնչակցությունների վրա⁷⁹⁸: Այսուհանդերձ ստուգաբանական մի շարք սխալները, ազդում են նաև հոդվածի եզրակացության վրա:

1993թ. “Zeitschrift der Deutschen Mirgenlandischen Gesellschaft” հայտնի արևելագիտական հանդեսում տպագրվում է Ի. Կուրթիկ-Գարուդոյի “Sprachliches und Zeitliches zur Zigeunermigration in Armenien und Palästina im Mittelalter” («Միջին դարերում Հայաստան և Պաղեստին գնչուների գաղթը լեզվական ու ժամանակագրական տեսանկյուններից») բավական ծավալուն հոդվածը: Մի քանի բառային և հնչյունական

⁷⁹³ St’u Manuš L., Review of T. Ventzel. Le dialecte des Tsiganes arméniens appelés Bochas. La géographie linguistique, la dialectologie et l’histoire de la langue, Erivan, 1976, p. 119-127 (en russe). *Études Tsiganes*, 24(1): 58.

⁷⁹⁴ St’u Boretzky N., Sind Zigeunersprachen Kreols? In N. Boretzky, W. Enninger & Th. Stolz (eds.). *Akten des 1. Essener Kolloquius über Kreolsprachen und Sprachkontakt*, Bochum, 1985, ss. 43-70.

⁷⁹⁵ Boretzky N. & Iglá B., Romani Mixed Dialects. In Peter Bakker & Maarten Mous (eds.). *Mixed languages. 15 Case Studies in Language Intertwining*, Amsterdam, 1994, pp. 35-68.

⁷⁹⁶ Boretzky N., Armenisches im Zigeunerischen (Romani und Lomavren). *Indogermanische Forschungen*, 100, 1995, ss. 137-155.

⁷⁹⁷ St’u Benninghaus R., Les Tsiganes de la Turquie Orientale. *Études Tsiganes* 37(3), 1991, pp. 47-60. Black G. F., The Gypsies of Armenia. *Journal of the Gypsy Lore Society* (3rd S.), 6, 1912-1913, pp. 327-330.

⁷⁹⁸ St’u Hancock I. F., On the Migration and Affiliation of Dōmba: Iranian Words in Rom, Lom and Dom Gypsy. *International Romani Union Occasional Papers*, 8, 1992; Hancock I. F., On the Migration and Affiliation of Dōmba: Iranian Words in Rom, Lom and Dom Gypsy. In Y. Matras (ed.). *Romani in Contact. The History, Structure and Sociology of a Language*: 25-51. Amsterdam, 1995.

գուգաբանությունների և պատմական տվյալների համադրությամբ փորձ է կատարվում լուսաբանել գնչուական գաղթի և Հայաստան ու Պաղեստին նրանց մուտքի ժամանակաշրջանները⁷⁹⁹:

2002թ. "Quaderni di Studi Armeni" շարքում լույս է տեսնում A. Orengo-ի "*Mangiare il giuramento = giurare in armeno, nella romani ed in lomavren*" («*Երդում ուտել = երդվել* հայերենում, ռոմանիում և լոմավրենում») 22 էջանոց գրքույկը, որտեղ հեղինակն անդրադառնում է լոմավրենում հայերեն որոշ փոխառությունների և պատճենումների՝ համեմատելով դրանք եվրոպական գնչուների լեզվում առկա նման ձևերի հետ⁸⁰⁰:

Նույն թվականին "Iran & the Caucasus" միջազգային հանդեսում հրատարակվում է սողերիս հեղինակի "The Iranian Loan-words in Lomavren, the Secret Language of the Armenian Gypsies" («Իրանական փոխառությունները լոմավրենում՝ հայկական գնչուների լեզվում») հոդվածը, որում գնչուական մյուս լեզուների և բարբառների հետ համեմատության միջոցով, մանրամասն քննության նյութ է դառնում բոշայերենի իրանական ծագման բառապաշարը⁸⁰¹:

THE SECRET LANGUAGE OF THE ARMENIAN GYPSIES AND ITS STATE OF RESEARCH

Vardan Voskarian

(summary)

Many groups of the Near Eastern Gypsies at the present time speak mostly the vernacular languages of the local population among which they usually dwell. Simultaneously, some of these Gypsies have developed specific secret languages or argots, known as a form of speech basically alien in grammar and mainly or partly Indo-Aryan in vocabulary: a kind of hybrids, which are the last scanty remnants of their former native tongue inherited from India.

One of these mixed languages is Lomavren, the secret language of the Armenian Gypsies or Boshia (endonym - Lom), the state of research of which is the object of the present article. This relict language now is spoken only by a small part, predominantly the elder generation, of the Boshia population in Armenia, Georgia and Turkey. As a secret language, Lomavren has a rather limited field of usage, being spoken by the Gypsies only in the course of confidential conversations.

⁷⁹⁹ Տե՛ս Kutlík-Garudo I. É., Sprachliches und Zeitliches zur Zigeunerimmigration in Armenien und Palästina im Mittelalter. *Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft*, 143, 1993, ss. 265-286.

⁸⁰⁰ Տե՛ս Orengo A., "Mangiare il giuramento" = "giurare" in armeno, nella romani ed in lomavren. *Quaderni di Studi Armeni* I., Pissa, 2002.

⁸⁰¹ Տե՛ս Voskarian V., The Iranian Loan-Words in Lomavren, the Secret Language of the Armenian Gypsies. *Iran and the Caucasus*, 2002, 6 (1-2), pp. 177-188.